

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

15.07.2013թ.

Արմավիրի մարզի Դաշտ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն անրապնդելու նպատակով, 2013 թվականի առաջին կիսամյանի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

ներկայացնում են հաշվետվություն Դաշտի գյուղական համայնքի բնակչությանը:

Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքն ունի մոտ 1050 բնակիչ՝ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք, որոնցից հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ ոչ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Հաշվետու տարում ծնվել է 14 երեխա:

Համայնքը գազաֆիկացված է մոտ 90%-ով, իսկ մնացած 10%-ի համար այժմ կազմվում է նախագիծ առաջիկայում ամբողջովին գազաֆիկացնելու համար: Ոռոգման ջրի մատակարարման հետ կապված կան որոշակի դժվարություններ: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:

Բյուջեի եկամուտների վարչական մաս.

1. հողի հարկ`	1 403.8 հդ.	- 476.1հդ.	- 33.9% -ով,
2. գույքահարկ`	364.6հդ.	- 306.6հդ.	- 84.1 % -ով,
3. վարձակալական հողի հարկ	75.0հդ.	- 65.6հդ.	- 87.5 % -ով,
4. տեղական տուրք	131.0 հդ.	- 169.8հդ.	- 129.7% -ով,
Ընդամենը` սեփ. եկամուտները	1 981.9հդ.	- 1 018.1հդ.	- 51.4% -ով,
Դոտացիա	6 068.5հդ.	- 6 068.5հդ.	- 100.0% -ով,
Ընդամենը եկամուտներ	8 050.4հդ.	- 7 086.6հդ.	- 88.0 % -ով:

Բյուջեի եկամուտների ֆոնդային մաս.

օտարումից եկամուտ --- 1 299.0հդ.:

Ընդամենը վարչական և ֆոնդային` 8 385.6հդ.:

Ներկայիս աշխատակազմին վճարվել է աշխատավարձ	---	5 113.1հդ.:
--- Տրամադրվել է սոց.օգնություն`	---	520.0հդ.,
--- «Հայրենական» թերթին բաժանորդագրության գումար է փոխանց.	---	48.0 հդ.,
--- «Հայֆերմեր» թերթին բաժանորդագրության գումար է փոխանցվել	---	22.0հդ.,
--- տեղեկատվական ծառայութ.	---	50.0հդ.
--- էլեկտրաէներգիաի ապառքին փոխանցվել է	---	154.9հդ.,
--- գրասենյակային ապրանքների ձեռք բերման համար`	---	40.0հդ.,
--- աղբահանության համար	---	325.0հդ.,
--- համակարգչային ծառայություն	---	19.2հդ.,
--- կապի ծառայություն	---	34.9հդ.:

2013թ. ընթացքում կայացել է ավագանու 3 նիստ:

- Համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել 192 հատ տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,
- Մուտք է եղել 57 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,
- Ելք է եղել 45 պաշտոնական գրություն,
- Մուտք է եղել 20 դիմում,
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 11 որոշում,
- Արձակվել է համայնքի ղեկավարի 8 կարգադրություն,
- Ամսեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:
- Կազմակերպել է անասնազլխաքանակի հաշվառում և ներկայացվել է վիճակագրական վարչություն, ժամանակին կազմակերպվել է հակահամաճարակային պատվաստումներ:
- Իրականացվել է հունիսյան հաշվառում՝ ցանքատարածությունների:

2013թ-ի ընթացքում իրականացվել են
հետևյալ աշխատանքները՝

Գյուղապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության
սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Չամայնքի 26 ընտանիքի տրամադրվել է 52.0 հդ. սոց.օգնություն:

Ընդհանուր առմամբ համայնքի անապահով ընտանիքներին ցուցաբերվել
է օգնություն,ինչես նաև չի անտեսվել համայնքում սգո արարողությունները:

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի միջնակարգ դպրոցում կազմա-
կերպվել է միջոցառում՝ հյուրասիրությունով:

Մայիսի 1-ին նշվել է աշխատավորների միջազգային օրը:

Չամայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում է գտնվում
Արցախյան ազատամարտիկները,իսկ հաղթանակի օրվա կապակցությամբ
համայնքում կազմակերպվել է միջոցառում,հյուրասիրություն և բացօթյա
համերգ:

Համայնքում յուրաքանչյուր անավա շաբաթ օրը իրականացվում է աղբահանություն:

Համայնքի կենտրոնական հրապարակը, որտեղ կան նորատունկ ծառեր և տեղադրված է խաչքարը, պարբերաբար ոռոգվում և խնամվում են գյուղապետարանի աշխատողների կողմից:

Համայնքի զբոսայգու սալիկապատման աշխատանքները ընթացքի մեջ են:

Մատչելի գներով ձեռք է բերվել 47տ.պարարտանյութ, 4630լ. դիզ. վառելիք և բաժանվել է բնակիչներին:

Այժմ էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ, Դաշտ համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի կողմից Դաշտի գյուղական համայնքի զարգացման համար:

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՔԱՂՎԱԾՔ

2013թ. հուլիսի 15-ին կայացած Դաշտի գյուղական համայնքի
անդամների ընդհանուր ժողովի արձանագրությունից

15.07.2013թ. Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի
մշակույթի տանը տեղի ունեցավ Դաշտ համայնքի
անդամների ընդհանուր ժողովը:

Ժողովին ներկա էին՝ համայնքի ավագանու անդամները,
գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի
տնօրենը, Դաշտի գյուղական համայնքի բուժքույրը, փոստի
վարիչը, մանկավարժներ և համայնքի բնակիչներ՝ թվով 69մարդ:
Հաշվետվությանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար, տիկին՝ Փառանձեն Կարապետյանը:

Ժողովի նախագահ՝ Զ.Պետրոսյան

- // - քարտուղար՝ Զ.Մուրադյան

Օրակարգում

1. Դաշտ համայնքի ղեկավար՝ Զ.Պետրոսյանի
2013թվականի առաջին կիսամյակի ընթացքում
կատարած աշխատանքների հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Զեկուցող՝

Դաշտ համայնքի ղեկավար՝ Զ.Պետրոսյան:

Ներկայացված 2013թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունից հետո կայացավ քննարկում՝ համայնքի ղեկավարի և համայնքի բնակիչների միջև:

Արտահայտվեցին՝ 1.Բոլոր ներկա գտնվողները բավարար գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

Ավագանու անդամ՝ Աշոտ Աբրահամյանը ողջունեց համայնքի ղեկավարի նախաձեռնությունը կապված համայնքը 100%-ով զագաֆիկացնելու աշխատանքների հետ:

Համայնքի բնակիչ՝ Մ.Կարապետյանը նշեց,որ չնայած 2012թ.նույնպես մասնակի վերանորոգվեց մշակույթի տունը,սակայն այժմ լիարժեք չի գործում և հիմնովին վերանորոգման խիստ կարիք է զգացվում:

Վ.Աբրահամյանը բարձրացրեց այն հարցը,որ հողատարածքների մշակությունը դժվարանում է,քանի որ ասֆալտապատ ճանապարհով թրթուրավոր տեխնիկայով երթևեկը արգելվում է,իսկ համայնքը չունի անհիվավոր գյուղ-տեխնիկա:

խիստ անհրաժեշտություն կա նոր գյուղ-տեխնիկայի:

Բարձրացված հարցերին պատասխանեց համայնքի ղեկավար՝ Զ.Պետրոսյանը: Խոստացավ համայնքի բնակիչների և վերադաս մարմինների աջակցությամբ լուծել համայնքի առավել կարևոր հիմնախնդիրները:

Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Փ.Կարապետյանը նշեց,որ բավարար է գնահատում գյուղապետարանի գործունեությունը՝ հողի հարկի / 33.9 % /,գույքահարկի / 84.1% /,վարձակալան հողի հարկի / 87.5%/, տեղական տուրքի /129.7% / գանձման արդյունքները:

2013թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարողականը կազմում է՝ 88.0%:

Նա նշեց նաև,որ ժողովում բարձրացված հարցերը մարզպետարանում կքննարկվեն և կտրվի համապատասխան ընթացք:

Դաշտի գյուղական համայնքի ղեկավար՝

Աշխատակազմի

քարտուղար՝



Յ.Պետրոսյան

Յ.Մուրադյան

Արձազրկման մարզի Դաշտ համայնքի առավել

կարևոր հիմնախնդիրները.

15.07.2013թ.

- 1.Նոր գյուղ-տեխնիկա ունենալու անհրաժեշտություն,
- 2.Մշակույթի տան շենքի վերանորոգում
- 3.Համայնքի բնակելի տարածքում խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում:
- 4.Համայնքի տարածքում ոռոգման ջրի կիսախողովակների շկմ. անցկացում:

Դաշտի գյուղական համայնքի ղեկավար  Պետրոսյան